

**ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի ընդլայնված նիստի**

ք.Երևան

05 նոյեմբերի 2019թ.

Օրակարգում՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ս. Սադյանի տարեկան հաշվետվությունը:

Նիստին ներկա էր՝ Երևանի պետական համալսարանի ռեկտորի ժամանակավոր
պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի, իսկ որպես քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայանի
թեկնածությունները:

Լսեցին՝ Նիստի նախագահը ձայնը տվեց Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի
պաշտոնակատար Աշոտ Սերոբի Սադյանին, ով ներկայացրեց հաշվետվությունը
(հաշվետվությունը կցվում է): Ելույթի վերջում Ա. Սադյանը շնորհակալություն
հայտնեց ռեկտորի պաշտոնակատար Գեղամ Գևորգյանին՝ Ֆարմացիայի
ինստիտուտի շարունակական զարգացմանն աջակցելու համար և պատասխանեց
ներկաների հարցերին:

Ելույթ ունեցան՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաթեխնոլոգիայի և
ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ ք.գ.թ.
Ս. Ափոյանը, բ.գ.դ. Է. Սեկոյանը, ուսանողական խորհրդի անդամ Անի
Խաչատրյանը, ովքեր իրենց գնահատանքի և գովասանքի խոսքերն ուղղեցին
ակադեմիկոս Ա. Սադյանին:

Ելույթ ունեցողները հատկապես կարևորեցին այն հանգամանքը, որ տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանը ջանք ու եռանդ չի խնայում Ֆարմացիայի ինստիտուտի շարունակական զարգացման և աշխատակիցներին մշտապես որգևորելու և լավագույն օրինակ ծառայելու համար: Նրանք նշեցին, որ ինստիտուտում այսօր էլ տեղի են ունենում դրական փոփոխություններ, լաբորատորիաները հագեցվում են նորագույն սարքավորումներով, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել ինչպես բարձակարգ կրթություն, այնպես էլ մղում է ավելի ակտիվ գիտահետազոտական գործունեությամբ զբաղվելու: Ուսանողներ Էմմա Մարկոսյանը և Անի Խաչատրյանը հավելեցին նաև, որ նորագույն սարքավորումներով հագեցած լաբորատորիաներում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել նաև փորձնականում: Այդ ամենի շնորհիվ նաև ուսանողները ակտիվորեն ներգրավվում են ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Ուսանողներին հնարավորություն է ընձեռվել նաև բարձր մակարդակով իրականացնել իրենց ավարտական և մագիստրոսական աշխատանքները:

Ելույթ ունեցողներն առաջարկեցին դրական գնահատել ինստիտուտի և, մասնավորապես, Ա. Սադյանի գործունեությունը:

Ելույթի ունեցավ նաև ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ. Գևորգյանը, ով իր դրական գնահատեց անցնող ուսումնական տարում Ֆարմացիայի ինստիտուտում կատարված աշխատանքները, շնորհակալություն հայտնեց Ա.Ս. Սադյանին՝ մանրամասն զեկուցման համար: Նա ողջունեց հատկապես այն հանգամանքը, որ ինստիտուտում մեծ թիվ են կազմում երիտասարդ, եռանդուն և բանիմաց կադրերը:

Ռեկտորի պաշտոնակատար Գ. Գևորգյանը նշեց, որ ինչպես պարզ դարձավ հաշվետվությունից, 2019-2020 ուս. տարում պլանավորված բոլոր աշխատանքները կատարվել են բարձր մակարդակով, շարունակվում են նաև վերանորոգման աշխատանքները նոր ստեղծվող «Դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիտորինգի» գիտաուսումնական կենտրոնի լաբորատորիայի համար:

Ամփոփելով ելույթները՝ Գ. Գևորգյանն առաջարկեց դրական գնահատել տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի հաշվետվությունը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանի հաշվետվությունը և այն գնահատել դրական:

Նիստի նախագահ՝

Կենսաբժշկագիտության ամբիոնի
վարիչ, Բ.Գ.Պ

Ռ.Ա. Հովհաննեսյան

Գիտական քարտուղար, ք.գ.թ.՝

Ա. Ս. Դադայան